

ՕՍԿԱՆԵԱՆԻ ԳԼԽԱԴՈՐԱԾ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ՄԵԿՆԵՑԱԲ ՎԻԵՆՆԱ

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 76ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 150 (21492) ՈՒՐԵԱԾ, 5 ՄԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷԶ

ԱԼԵՍԲԵՐՈՎ
ՉԻ ՀՐԱԺԱՐԻՐ
ՊՈՌՈՏԱԽՕՍՈՒԹԵՆԷՆ

Ալբալեյանի խորհրդարանի նախագահ Մուրթուկ Ալեքսեյովը երկկայանաբար է, որ Ալբալեյան իր տարածքին ոչ մեկ սահմանափակում չկա՞նք «գրաւած», իսկ Հայաստանի դէմ մօտ օրէն պատժամիջոցներ պիտի կիրարկուին...

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐԵ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՐՑՈՎ



Նախարարաց խորհուրդը երէկ առաւօտեան ժամը 10:00ին, Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը, նախագահութեամբ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Նիստէն բացակայեցան առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրեսի, հանրագումար շինութեան եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի եւ կրթութեան ու բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժարը:

Նիստը աւարտեցաւ յետմիջօրէի ժամը 3:00ին: Նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ նախանցեալ գիշեր հարաւային Լիբանանի վրայ կատարուած իրաւիչեան օդուծի շնորհիւ շրջանակները վտանգաւոր են եւ բացայայտօրէն կը խախտեն ՄԱԿի կողմէ ձեռնարկուած սահմանափակումները:

Նախագահ Լահուտ այս իմաստով արտաքին գործոց նախարարութեան պահանջեց բողոքագրի մը յղել ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ վարչական բարեկարգումներու աշխատանքը պէտք է ըլլայ հետեւողական եւ թիրախ չհարձնէ որոշ անհատներ, այլ բարեխառն վարչութեան գործընթացը, պատասխանատուները հաշուետուութեան կանչելու եւ հսկողութիւնը խստացնելու միջոցառումներուն ընդմէջէն: Ան աւելցուց, որ այս մեթոտները կիրարկելով, բնականաբար քաղաքացիները կ'արժանանայ լաւորակ ծառայութիւններու, իսկ կառավարութիւնը կը յաջողի կասեցնել փտածութիւնն ու միսիւնը:

Նախագահ Լահուտ աւելցուց, որ նախագահութեան նախարար Միշել Սըմանայի խորհուրդին փոխանցելով լիբանանեան կառավարութեան ու լիբանանցի ժողովուրդին ցաւակցութիւնները:

Ապա կառավարութիւնը անցաւ օրակարգերու քննութեան: Նախարարները համաձայն գտնուեցան էլեկտրականութեան ընկերութեան տրամադրելի 300 միլիարդ լ. ոսկիի գումար մը եւ որոշեցին յառաջիկայ Չորեքշաբթի օր կայացնել արտակարգ նիստ մը՝ էլեկտրականութեան մարտի տագնապի լուծման քննարկման համար:

Իր յայտարարութիւններուն մէջ տեղեկատուութեան նախարար Միշել Սըմանայ յայտնեց, որ կառավարութիւնը որոշած է նաեւ վերաշինութեան եւ բարգաւաճումի խորհուրդի հարցերու քննարկման նպատակով փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի գլխաւորութեամբ կազմուած նախարարական յանձնախումբի պատրաստած տեղեկագրի երեք գլուխները քննարկել: Ան հերքեց, որ նշեալ խորհուրդին աշխատանքներուն եւ նախագահին հատուցումներու ձեռնարկը վնաս կը պատճառէ վարչապետ Հարիրիի:

Բջիջային հեռաձայնի ընկերութիւններու ապաւետականացման հարցով կառավարութիւնը վաւերացուց երկու տարբեր ընկերութիւններ հիմնելու օրինագիծը:

Կառավարութիւնը երէկ Լուիս Լահուտը նշանակեց երկրագործութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն, փոխան ժողով Ժապարի, որ դատական իշխանութիւններուն կողմէ հարցաքննութեան ենթակայ է:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի ժողովէն ետք թղթակիցներու ըսաւ, որ տրուած որոշումները դրական են եւ կը ծառայեն երկրին գերագոյն շահերուն:

Անդրադառնալով վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի առընչութեամբ կառավարութեան որոշումին, վարչապետ Հարիրի ըսաւ, որ ինք գոհ է եւ շեշտեց, որ այն լուրը, թէ խորհուրդի նախագահին եւ անդամներուն տրուելիք հատուցումները իրեն վնասներ կը պատճառեն, անձիջ է:

Վերջապէս, Հարիրի ընդգծեց, որ կառավարութիւնը երկար ժամանակի վրայ ֆիուլ օլլ պիտի ապահովէ էլեկտրականութեան ընկերութեան:

ԱՊՊԱՍ ԱՐԱՅԱԹԻ ՅԵՏ ՃԱԿԱՏՈՒՄԵ ՄԸ ԽՈՒՄԱՓԵՑԱԲ

Պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս խուսափեցաւ Եասէր Արաֆաթի հետ ճակատումէ մը խորհրդարանի նիստին, ուր կոչ ուղղեց տարակարծութիւններու լուծման եւ վարչագործեան ալիքի մեղմացման:

Ապպաս, որ վարչապետ նշանակուած էր, որովհետեւ Ուաշինկթըն կը մերժէր խօսիլ Արաֆաթի հետ, կոչ ուղղեց Ուաշինկթընի վերջ տալու պոթոթիւն անձնաւորութեան մը, որ «սահմանադրութեամբ օրինական նախագահ է» պաղեստինցի ժողովուրդին: Պաղեստինցի վարչապետը ըսաւ նաեւ, որ ժամը հասած է լուծելու համար վեճերը կառավարութեան եւ Արաֆաթի նախագահութեան միջեւ: Ապպաս խուսափելով ուղղակի ճակատումէ մը Արաֆաթի եւ խորհրդարանին հետ, որ կրնար վստահութեան քուէի հարց մը դնել, տագնապին ամբողջ պատասխանատուութիւնը բեռնուց Իսրայէլի ուսերուն: Ան ըսաւ, որ չկայ մէկը որ չի բաժնէր իր այս տեսակէտը: Ապպաս աւելցուց, որ Իսրայէլ որոշեց վերսկսիլ ծայրայեղականներու ահաբեկչութեան՝ Այսրլորդանանի շուրջ կանգնեցուցած պատին պատճառով ամերիկեան քննադատութեան ենթարկուելէ ետք: Ապպաս զիտել տուաւ, որ այս կացութեան դիմաց, Իսրայէլ որոշեց այլ միջոցառումի մը դիմել՝ վերսկսելով պատասխանատուներու սպանութեան՝ խախտելով արմատական շարժումներու յայտարարած պիստուկը:

Խօսելով արմատական շարժումներուն հետ կապերուն մասին, Ապպաս ըսաւ, որ պաղեստինեան կառավարութիւնը համաձայն չէ ուժի գործածութեան Համասի եւ Իսլամական Ժիհադի դէմ: Ան շեշտեց, որ ընդդիմադիր ճակատին հետ երկխօսութեամբ կարելի է լուծում մը գտնել, ոչ թէ՛ պինուորական ուժով, զոր կը պահանջէ Իսրայէլ:

Շաբ.ը՝ էջ 10

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ԴՐԱԿԱՆ ՁԵՆ ԱՐՁԱԳԱՆԳԵՐ ՊՈՒՇԻ ԿՈՋԻՆ

Երէկ, Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք եւ Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէօտըրը դրական չարձագանգեցին Իրաքի գծով ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին դիմելու ճորձ Պուշի կողմէն, ինչ որ գոհ չձգեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըրը, որ հակադրեց եւ ցաւ յայտնեց:

Շրէօտըրը եւ Շիրաք թէեւ մերժեցին Պուշի առաջարկը, սակայն ոչ՝ կտրականապէս: Անոնք պատուհան մը բաց ձգեցին յայտարարելով, թէ կարելի է հարցը քննարկել՝ բարեփոխելով որոշ կէտեր:

ՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐՈՒՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԱՆՎԱՐ

ԷՋ3

ԻՐԱՔԻ ԸԱՐՑՈՎ

ՃՈՆՉԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՀԱՐՈՒԱԾ ՄԸ ԿԸ ՀԱՍՑՆԷ ԹՈՆԻ ՊԼԵՐԻ

ԼՈՆՏՈՆ, 4 (ԱՅՓ).- Իրաքի դէմ պատերազմի բրիտանական կառավարութեան պաշտպանողական ծանր հարուած մը եւս ստացաւ, երբ պաշտպանութեան նախարարութեան քարտուղար Մայքլ Բարթոլոմէոսը իր վկայութիւնը դատական ատենանի, հաղորդեցին օրաթերթերը:

Նախարարութեան գաղտնի սպասարկութեան քաժանութիւնն նախկին պաշտօնատար մը՝ Պրայըն ճոնսի հարցաքննութեան ընթացքին ըսաւ, որ գաղտնի սպասարկութեան պատասխանատուներ մտահոգութիւն յայտնած էին (պատերազմի որոշումէն առաջ), որ կառավարութեան պատրաստած թղթածրար - տեղեկագիրը Իրաքի վէսքերու ծրագիրին մասին չափապանցուած կը նկատուի: ճոնս աւելցուց, որ պաշտօնատարներուն արտաբայտած մտահոգութիւնները



անտեսուած էին: ճոնսի տուած վկայութիւնը կը ջախջախէ վարչապետ Թոնի Պլեթ

րի պաշտպանողական իրաք ներխուժելու մասին, կը գրէր «Տի հնտիփէնտրնթ» օրաթերթը: «Տը կարտիլը» իր կարգին կը գրէր, որ ճոնսի տուած փաստերը կը տկարացնեն Պլեթի եւ կառավարութեան դիրքը: «Տը Տէյլի Միլըրը» կ'աւելցնէր, որ կառավարութեան դէմ ամբաստանութիւնները սակէ աւելի լուրջ եւ վտանգաւոր չէին կրնար ըլլալ: Այլ օրաթերթ մը կը գրէր, որ հակառակ այս բո-

լոր տուեալներուն ու վատեւրուն, կառավարութիւնը տակաւին չէ տուած գոհացուցիչ բացատրութիւն մը, թէ իշխանութեան հեռանալու մտադրութիւն չունի, որովհետեւ համոզուած է, որ ճիշդ որոշումներ տուած է: Խօսելով Քելիի անձնապաշտպանութեան պատճառներուն մասին տեղի ունեցող հետաքննութեան մասին, Պլեթ ըսաւ, որ դատարանին կը վերապահէ դատելն ու վճիռ արձակելը:

ՊԼԵՐ՝ ԱՆԴՐՈՒԹԵԼԻ

Չէնքերու մասնագէտ Տէյլիտ Քելիի անձնապաշտպանութեան պատճառներուն մասին տեղի ունեցող հետաքննութեան մասին, Պլեթ ըսաւ, որ դատարանին կը վերապահէ դատելն ու վճիռ արձակելը:

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՊՐԻՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ ՍԸ

Կ'ԸՍԵ ՎՏՈՎԻՆ

Միջին Արեւելքի խաղաղութան գործընթացի ռուս լատուկ պատուիրակ Անտոնի Վտովին երէկ յայտնեց, որ շրջանային իրադարձութիւնները կ'ապրին ողբերգական հանգրուան մը եւ այս կացութեան միակ լուծումը նկատեց միջազգային օրէնքներու գործադրութեան անհրաժեշտութիւնը, լատուկ պատուիրակի ճամբու քարտէսի իմաստով:

Վտովին երէկ ընդունուեցաւ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյ-տի կողմէ:

Հանդիպումէն ետք Վտովին շեշտեց, որ ամէն ջանք պէտք է ընել լուծելու համար Միջին Արեւելքի տագնապը եւ վերջ մը դնել շրջանին մէջ տիրող ահաբեկչութեան ալիքին:

Վտովին անխուսափելի նկատեց նաեւ խաղաղութեան բանակցութեանց վերականգնումը աշխատանքը՝ հասնելու համար Միջին Արեւելքի տագնապին արդար եւ անբողջական լուծման:

Անդրադառնալով միջին արեւելեան տագնապին դուրս գալու միջոցառումներուն, Վտովին ըսաւ, որ Իսրայէլ եւ Պաղեստին պէտք է անպայման վերադառնան խաղաղութեան ճամբու քարտէսին, որ խաղաղութեան գործընթացի հիմնական ծրագիրն է. ան աւելցուց, որ խաղաղութեան գործընթացը պէտք է ըլլայ ամբողջական, այսինքն՝ ընդգրկէ նաեւ Լիբանանն ու Սուրիան:

Ան ըսաւ, որ հարկ է հարաւային Լիբանանի մէջ արձանագրուող սահմանային խախտումներուն վերջ տալ, որովհետեւ անոնք կրնան շրջանին մէջ յաւելեալ բռնարարներու եւ վայրագութեան դուռ բանալ:

Վտովին այցելեց նաեւ տեղեկատուութեան նախարար Միշել Սըմահայի, ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պորթիսի:

Քննարկումի առարկայ դարձան Պէյրութ - Մոսկուա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

Վտովին Քորաթեմի մէջ ընդունուեցաւ նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի կողմէ:

ՊԱՍՊՏԱ - ԱԼԵՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՍԸ ԱԲՐԵՅՍԻ

Ներքին գործոց եւ հարցերու նախարարապետութեանց ընդունուեց Երէկ յայտարարեց, որ նախանշուած ժամը 12:30ին աւարտեցաւ Պասպտա - Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն թեկնածութիւնը ղեկավարող մնացած մարտի համայնքի երեսփոխանական աթոռին պաշտօնական թեկնածուներն են Հանրի Հըլու, Իմաստ Հատ, Մուսիբ Պրժժանի եւ Հիքմաթ Տիպ:

ՀԱՅ ԱՒԵՏ. ՔՈԼԵՃ

Հիմնուած 1923ին, Մեքսիք փողոց (Հեռ. 01-349816, Պէյրութ)

- 1.- Նորեկ աշակերտներու դիմումները կը շարունակեն ընդունել Սեպտեմբերի ընթացքին ամէն օր Երկուշաբթիի Ուրբաթ կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:30:
- 2.- 2003-2004 լրացուցիչ արձանագրութիւնները մանկապարտէզի, նախակրթարանի եւ երկրորդական բաժնի Համար տեղի կ'ունենան Հինգշաբթի, 29 Սեպտեմբեր եւ Ուրբաթ, 30 Սեպտեմբեր 2003ին, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 12:30:

Պաքալօրիա (12րդ) դասարանի լրացուցիչ արձանագրութիւնները Սեպտեմբեր 9էն 12ին են:

Նախնական արձանագրութիւն կատարած նախկին աշակերտները պարտին վերահաստատել իրենց արձանագրութիւնը:

3.- Հոգաբարձութեան կարգադրութեամբ օրու պիւսի սպասարկութիւն պիտի ունենանք բոլոր շրջաններուն համար:

4.- Բոլոր արձանագրուողներէն, նախկին թէ նոր, կը պահանջուի միասին բերել երկու փոքր լուսանկարներ:

5.- Նախնական արձանագրութիւն չըրած նորեկ աշակերտներ պարտին բերել յաճախած վերջին դպրոցի վիճակագրուցը, բարի վարուց վկայագիր, ինքնութեան թուղթի ֆոթոքոփին եւ կրթական նախարարութեան մօտ իրենց վաւերացուած թիւը:

6.- Վերաքննութիւններ տեղի կ'ունենան Հետեւեալ կարգով. առաւօտեան ժամը 9:00էն սկսեալ, Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր (յեզուական նիւթեր) եւ Ուրբաթ, 26 Սեպտեմբեր (թուաքանութիւն եւ գիտական նիւթեր):

11րդ դասարանի վերաքննութիւններն ու դէպի 12րդ դասարան մուտքի քննութիւնները Չորեքշաբթի 11 եւ Հինգշաբթի 12 Սեպտեմբերին են:

7.- Չորեքշաբթի, 1 Հոկտեմբեր առաւօտեան ժամը 7:40ին դասաւանդութիւնները կը սկսին:

12րդ դասարանի դասերը կը սկսին Երկուշաբթի, 15 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 8:00ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Ներսէս Սարգիսեան եւ զաւակները՝ Յակոբ եւ Մայրա Տէր եւ տիկին Անդրանիկ Սարգիսեան եւ զաւակները՝ Տէր եւ տիկին Գէորգ Սարգիսեան եւ զաւակները Արժ. Տ. Վաչէ քէյ. Թադեոս Տէր եւ տիկին Մովսէս Սարգիսեան եւ զաւակները Տէր եւ տիկին Սարգիս Սարգիսեան եւ զաւակները Տէր եւ տիկին Յակոբ Թադեոսեան եւ զաւակները Տիկին Ժորժէթ Եզգուպեան եւ զաւակները եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կոնց, մօր, բրոք եւ Հարազատին:

ՄԱՀԱԶԴ

ՌԿՍԱՆՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ (Ծնեալ՝ ԵԱԳՈՒՊԵԱՆ, Ճարապիլուս, 1930ին) մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2003ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Թուղթակաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Գ. Յակոբ եկեղեցու «Տիրան Պապիկեան» դահլիճի մէջ, իսկ Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Սեպտեմբերին՝ հանգուցեալին բնակարանը, Քարաթիւն, «Սեւեկայ» փողոց, «Սիւլէյման» շէնք, Ա. յարկ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԲԱՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ձեւարանի գրասենեակները կը վերաբացուին Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003ին եւ կը գործեն ամէն օր (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) ժամը 8:00էն 13:00: Ուշացած աշակերտները պէտք է փութան արձանագրութիւնը:

Վերաքննութիւնները եւ նորեկ աշակերտներու քննութիւնները տեղի կ'ունենան Հետեւեալ կարգով:

Ժ. ԵՒ ԺԱ. ԳՍԱՍՐԱՆՆԵՐ Զորեքշաբթի, 10 Սեպտեմբեր 2003 - Լեզուներ Ծրաններէն, ժամը 7:30ին Արաբերէն, ժամը 9:30ին Հայերէն, ժամը 11:30ին

Հինգշաբթի, 11 Սեպտեմբեր 2003 - ԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ Ուսողութիւն, ժամը 7:30ին Բնագիտութիւն եւ քիմիագիտութիւն, ժամը 9:30ին Բնապատմութիւն, ժամը 11:30ին

Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003 - ԱՅԼ ՆԻՒԹԵՐ Հայոց Պատմութիւն, ժամը 7:30ին Աշխարհագրութիւն, պատմութիւն, ժամը 9:00ին Անգլերէն, ժամը 10:30ին

ՄԻՒՍ ԳՍԱՍՐԱՆՆԵՐ Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 - Լեզուներ Ծրաններէն, ժամը 7:30ին Արաբերէն, ժամը 9:00ին Հայերէն, ժամը 10:30ին

Զորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2003 - ԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ Ուսողութիւն, ժամը 7:30ին Գիտութիւն, ժամը 9:00ին

Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2003 - ԱՅԼ ՆԻՒԹԵՐ Հայոց Պատմութիւն, ժամը 7:30ին Աշխարհագրութիւն, պատմութիւն, ժամը 9:00ին Անգլերէն, ժամը 10:30ին

Գիրքերու եւ Համազգայինի վաճառք տեղի կ'ունենայ Չորեքշաբթի 24, Հինգշաբթի 25 եւ Ուրբաթ 26 Սեպտեմբեր 2003ին:

Մանկապարտէզի գոգնոցներու վաճառքը եւ ծանօթութիւններու փոխանցումը՝ Հինգշաբթի 25 եւ Ուրբաթ 26 Սեպտեմբեր 2003ին:

ՎԵՐԱՄՈՒՏ 2003-2004 տարեշրջանի դասաւանդութիւնները կը սկսին Հետեւեալ դասաւանդումով:

ԺԱ. եւ ԺԲ. դասարաններ - Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003, ժամը 7:30ին

Ի. Լ. Թ. Ժ. դասարաններ - Չորեքշաբթի, 1 Հոկտեմբեր 2003, ժամը 7:30ին Ա. Է. Զ. դասարաններ - Հինգշաբթի, 2 Հոկտեմբեր 2003, ժամը 7:30ին

Կասիզ դասարան - Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2003, ժամը 9:00ին

Կապոյտ դասարան - Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2003, ժամը 9:00ին

Վարդապետ դասարան - Չորեքշաբթի, 8 Հոկտեմբեր 2003, ժամը 9:00ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Գ. «Տիգրան Ծամուր» կոմիտէն կը գուժէ իր շրջանի հաւատաւոր եւ վաստակաշատ ընկերներէն:

ՎԱՐԴԱԷՍ ՍԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003ին:

ՄԱՀԱԶԴ

Օրդ. Անի Սարեան Տիկին Շողիկ Սարեան եւ զուտորը՝ Ժիւլի Տէր եւ տիկին Գրիգոր Սարեան եւ զաւակները Տիկին Ազատուհի Տէր Պետրոսեան Տէր եւ տիկին Սարո Տէր Պետրոսեան Տէր եւ տիկին Կարէն Մկրտիչեան Սարեան ընտանիք Տէր Պետրոսեան ընտանիք Խուրի ընտանիք Մկրտիչեան ընտանիք Իպրահիմ ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, եղբոր եւ Հարազատին:

ՎԱՐԴԱԷՍ ՍԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1930ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003, Ժեզթուրի հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Թուղթակաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 5 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, էջերֆիլի Ս. Յակոբ եկեղեցու մէջ, ուր կ'է Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Գ. Յակոբ եկեղեցու «Տիրան Պապիկեան» դահլիճի մէջ, իսկ Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Սեպտեմբերին՝ հանգուցեալին բնակարանը, Քարաթիւն, «Սեւեկայ» փողոց, «Սիւլէյման» շէնք, Ա. յարկ:

ԱԿԱՐԿ

ԲԱՐԱՅՈՒՅԱԿԱՆ ԵՏԴԱՐՉ ԴԷՊԻ ՄԱԿ

Ամբողջ աշխարհը կը վկայէ, թէ իրաքեան պատերազմի նախօրեակին ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի մնայուն հինգ անդամներէն երեքը՝ Ռուսիա, Ֆրանսա եւ Չինաստան որքա՞ն ջանացին համոզել Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշն ու անոր հետեւորդ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Դեյլըր՝ չափաւանջելու իրաքի վրայ, համբերելու եւ դիւանագիտական ճամբով լուծելու Սատտամ Հիւսէյնի վարչակարգին ճակատագիրը, սակայն ապարդիւն: Ուաշինկթըն եւ Լոնտոն մնացին անդրդուելի եւ արշաւեցին դէպի Իրաք:

Աւելին: Պուշ Թէ Դեյլըր հրապարակաւ ինչե՞ր չըսին ՄԱԿի, ինչպէս նաեւ Ֆրանսայի, Ռուսիայի եւ Գերմանիոյ հասցէին, որովհետեւ անոնք յստակօրէն դէմ էին պատերազմի ընտրանքին: Կարգ մը մեկնաբաններու համաձայն՝ ՄԱԿ եւ վերոյիշեալ երկիրները դէմ էին պարպապէս որովհետեւ «կարկանդակէն (քարիդ) բաժնի պիտի չունենային»:

Այսօր, պատերազմի ազդանշանէն շուրջ չորս ամիս ետք, շուկայական այդ աժան տեսակետը փաստօրէն սխալ դուրս եկաւ, եւ Փոլսիի, Շիրաքի ու Շրէտորի համոզումը, թէ պատերազմի գնով հարցը ոչ միայն չի լուծուիր, այլեւ կը բարդանայ, արդար դուրս եկաւ:

Այլապէս ի՞նչպէս բացատրել Ճորձ Պուշի ետդարձը, այլ խօսքով՝ Իրաքի հարցը լուծելու ի խնդիր վերստին ձեռք երկարելը ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին, որուն նկատմամբ ան այնքա՞ն անհաշի ու անարդար վերաբերում ցուցաբերեց ամբողջ ամիսներ:

Իսկ ինչո՞ւ Պուշ հիմա ճարահատ կը դիմէ ՄԱԿին՝ յստակ է ու մեկին: Իրաքի ներկայ անիշխանական կացութիւնը, արիւնալի ակաւախարումներն ու խափանարարական արարքները, առողջ դարձած ու անհիմաստ տեղը զոհ ազող ամերիկացի պիւնտրներուն իրավիճակը, իրաքի ժողովուրդին մօտ հետզհետէ ծաւալող պոռթկումն ու հակամարտութեան տրամադրութիւնները, եւ այս բոլորին դիմաց ամերիկեան ուժերուն անկարողութիւնը ի վերջոյ սրափեցուցին ամերիկացի ղեկավարը, որ յայտնապէս ինկած էր բոլորին ծանօթ «բապէ»ներու իշխանութեան ճիւղին մէջ, այն «բապէ»ներուն, որոնք հակաարաքական իրենց մոլորցքէն կուրցած՝ ամէն գնով կը փորձեն իրականացնել սինական իրենց ցնորքը, բայց չեն յաջողիր:

Իրաքի պատերազմը անգամ մը եւս եկաւ ապացուցելու, թէ ծաւալապաշտական քաղաքականութիւնը միանգամընդմիջտ անընդունելի է աշխարհին համար, եւ եթէ նախորդ դարերուն այդ մէկը իրականացնելը կարելի էր պիւնտրական հզօր ուժով, այսօր փաստօրէն անկարելի է: Ամերիկացիք անոր փորձը նախապէս ապրած են վիթերանի մէջ, ուր փարթիկական կոնիւնտրի դիմաց անոնք արիւնաքամ ու զլիխկոր հեռացան ծալրագոյն արեւելեան այդ հողամասէն, սակայն միեւնոյն սխալը կրկնեցին եւ գրեթէ նոյն ճակատագիրին կ'ենթարկուին այսօր Իրաքի մէջ:

Թէ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի մնայուն երկիրները կը վերցնէ՞ն Պուշի երկարած ձեռքը, կամ ոչ, յստակ չէ տակաւին, թէ եւ Ֆրանսա եւ Գերմանիա արդէն իսկ տնտես են ստն պատասխան մը: Այսուհանդերձ անոնց վերջնական կեցուածքը կը յստականայ մօտ օրէն, մինչ այդ սակայն մէկ բան ուշագրաւ է ու բարացուցական, որ աշխարհի հզօր գերպետութիւնը այսօր ետդարձ մը կը կատարէ՝ անուղակիօրէն ընդունելով իր սխալը, ինչ որ վերջին հաշուով ամօթ մը չէ, ընդհակառակն՝ «մեծութիւն», որովհետեւ միայն «գիտակից» մարդը կրնայ ընդունիլ իր սխալը...

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆՂԵՍ



Ելոյթ կ'ունենայ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԸԵԱՆ Մասնակցութեամբ ԽԱԶԿԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՍՈՒՄԲԻՆ Հիւր երգիչ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ ԸՆԲԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003, «Նապրի Այնճար» ճաշարանին մէջ: Սակ՝ 35 եւ 40 \$ Տոմսերը ապահովել Սփրիտո Խաչիկ Մալխասեան, «Տիգրէք Եանկ»-ն եւ «Նապրի Այնճար» ճաշարանէն: Հեռ. 08 - 620590, 03 - 790623:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԶԱՐԻՔԻՆ ԶՈՂԵՐԸ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԵՐԸ

2003 թվականի Օգոստոսը աղէտալի եղաւ մասնաւորաբար Ֆրանսայի ծերերուն համար: Ֆրանսա պաշտօնապէս յայտարարեց, թէ երկրին տարածքին 11-18 Օգոստոսի միջոցին մահացած են 11,348 ծերունիներ՝ տարի բարձր աստիճանի ալիքին պատճառով: Սա կը նշանակէ, որ ամառը իր աննախընթաց ջերմութեամբ աղէտարեք եղած է հասուն տարիքի ֆրանսացիներուն համար. անոնք երբեք չէին սպասեր նման չարիքի մը, մասնաւորապէս որ երրորդական թէ՛ ամերիկեան երկիրներու մէջ ծերունիները կը վայելէին ամենայն բարիք, ապահովութիւն, ծերանոցներու, հանգստեան տուններու կամ իրենց սեփական բնակարաններուն մէջ՝ հոգածութեամբ, պետական մակարդակով ընկերային ծառայողներու, ծերանոցներու խնամատար անձնակազմերու:

Նման անակնկալ եւ «հաւաքական ջարդի բնոյթ ստացած աղէտի պարագային ստեղծուած խուճապն ու շփոթը, գարմանքն ու գարհուրանքը ծանր կացութիւն մը կը յայտնաբերեն: Առաջին հերթին կայ թաղման անյետաձգելի աշխատանքը: Կարելի՞ էր իրագործել երկրին թաղման օրէնքը, չորս-հինգ օր ննջեցեալ պահելու մեռելապատ մէջ, մինչեւ որ... բայց այս պարագային այդպիսի օրէնքի յարգումը չեղանքով պիտի ըլլար անշուշտ, «հարկը օրէնքը կը լուծէ» սկզբունքով: Այսուհանդերձ պետական առողջապահական սպասարկութիւնները չեն անճրկած. անոնք հնարած են ճակատական սառնարան-վրաններ՝ տեղաւորելու համար հազարաւոր հանգուցեալները, որպէսզի կարելի ըլլայ զանոնք յանձնել իրենց տէրերուն (եթէ տէր ունին):

Տեղեկատուական միջոցները փոխանցեցին այս տեղեկութիւնները, որոնց ի լուր՝ նախ զարմացան Երրորդ աշխարհի ժողովուրդները: Անոնք երկար մտածեցին աղէտին ու խեղճ ծերունիներուն եղբրական ճակատագրին մասին, թէ՛ այդ ի՞նչպէս պատահած է, որ ծերունիները մնացած են անօգնական: Ենթադրութիւնները յայտնեցին, թէ ամիսը Օգոստոս ըլլալով՝ բազմաթիւ ծերանոցներու պաշտօնները մեծ մասամբ արձակուրդի մեկնած էին, հետեւաբար նուազած է «գաւաթ մը պաղ ջուր» տալու ծառայութիւնը:

Ինչ կը վերաբերի իրենց բնակարաններուն մէջ առանձին ապրող ծերերուն, անոնց օգնութեան կանչը լսող չէ եղած, որովհետեւ չեն համարձակած այդ կիզիչ տաքին տունէն դուրս ելլել, օգնութեան ձեռք երկարելու: «Բարի սամարացիները» բացակայ եղած են երկրէն:

Այս ծանր եւ չնախատեսուած «ջարդին» համար այսպէսեւ Ֆրանսայի առողջապահութեան նախարարութիւնը իր բոլոր սպասարկու բաժանմունքներով:

Բայց ի՞նչ օգուտ: Այժմ Ֆրանսայի մէջ գրեթէ ծերեր չեն մնացած...

Եթէ պահ մը մտածենք, թէ Լիբանանի տաք ամրան մահացած են մեր ծերանոցներու մէջ մէկ կամ երկու հիւանդ ծերեր, հաւարը պիտի փրթէր, վայնասուն մը ծայր պիտի տար, թէ մեր բարեսիրական կազմակերպութիւնները չեն հոգար, չեն խնամք մեր ծերունիները, անոնք լքուած են, անտէր են, եւ հագու մէկ կամ երկու «բարեսէր կիներ» կը տաքնապին անոնց զրկուած վիճակով:

Եկէք անկեղծ ըլլանք եւ բաց սրտով խօսինք այս մասին: Շատ բնական երեւոյթ է, որ ամրան տօթին եւ ձմրան խիստ ցուրտին կը մահանան ծերունիները եւ ֆիզիքական դիմադրականութենէ զուրկ հիւանդները: Բայց, Աստուած մի՛ արասցէ, եթէ նման աղէտ մը մեր գլխուն գար, մեր ծերերը մահանային հաւաքական մահով, ի՞նչ ճակատագրի պիտի ենթարկուէին ծերանոցները, անոնք լքուած են, անտէր են, եւ հագու մէկ կամ երկու «բարեսէր կիներ» կը տաքնապին անոնց զրկուած վիճակով:

Ուրեմն եկէք ընդունինք, որ Արեւելքի մէջ չէ մեռած մարդասիրութիւնը, հաւ թէ ինչու մեր ծերերը կը դիմանան ցուրտին եւ տաքին:

Յարգանք մեր բարեսիրական բոլոր կազմակերպութիւններուն, որոնք եթէ մեր ծերերը պտոյտի չեն տանիր, բայց ապահոված են անոնց ջերմեցիչ-վառարաններն ու էյ. Սիները: Թող ապրին մեր ծերերուն «պնակ մը կերակուր» եւ «գաւաթ մը ջուր» տուողները...

ՀԱՎԱՆԳՈՒԽՏ

ԻՐԱՔԻ ՏԱԳՆԱՊԸ ԿԸ ԽՈՐԱՆԱՄՅ

Իրաքի կացութիւնը օտակա տարածք մը ըլլալու վիճակէն անդին անցած է արդէն: Ամէն օր ցնցող դէպքեր կը պատահին եւ հետզհետէ անոնք ընթացիկ պիտի դառնան, այսինքն պիտի դադրին ու շարունակուին գրաւելէ: Աշխարհի ճակատագիրը որոշողները եւս յոգնածութեան պատճառով անտարբերութիւն պիտի ցուցաբերեն՝ սպասելով, որ ժամանակը լուծէ հարցերը: Բայց այդ միջոցին կեանքեր պիտի խլուին, ընտանիքներ պիտի քանդուին:

Ամերիկեան միջամտութիւնէն ետք, հակառակ պետական կազմակերպութեամբ ընդդիմադիր ուժի մը բացակայութեան, ընդդիմութիւն մը կը գործածէ աղքատներու եւ տկարներու վերապահուած զենքը՝ խափանարուցելու թիւնը: Այժմ Երբեք կան փորձեր անցեալին ցոյց տուած էր, որ գրաւման ուժերուն դէմ կոտորուները դիրքութեամբ կը կորսնցնէին իրենց հետքը չըլլապատին մէջ, որուն հարազատ էին: Այսօր կարծէք նոյն փորձը կը կրկնուի, քանի որ հակամարտիկեան բռնարարները կը շարունակուին, հակառակ օտար բանակներու ներկայութեան, դաշնակից ուժերը դեռ չչափողեցան Սատամ Հիւսէյնի հետքը գտնել, ինչ որ կը նշանակէ, թէ ան ունի ժողովուրդին նեցուկը:

Իմբասարման մը պատճառով չի կրօնապետի մը եւ չորջ հարիւր անձերու սպանութենէն ետք, կը հաստատուին քաղաքական եւ գիտնալ պայքարի նոր ձեւեր, անոնք կոչուին ահաբեկչութիւն կամ այլ անունով: Ամերիկեան հռչակաւոր է իր կազմակերպական եւ նախատեսութիւններու վերլուծական խումբերով, բայց այս պարագային դեռ չգտաւ իրաքի մէջ խաղա-

ղութեան պայմանները ստեղծելու եւ վստահութիւն ներշնչելու բանարդէն: Պէտք եղաւ, որ եղեւնափորձ մը կատարուի, որպէսզի գրաւման ուժերու հրամանատարութիւնը հասկնայ, որ իրաքի սուրբ վայրերու հսկողութիւնը կը վայելէ: Յարգ ՄԱԿի եւ կարգ մը երկիրներու խաղաղեցման եւ վերակառուցման աշխատանքներէն հեռանալով՝ գտնուեց ՄԱԿի յանձնելու կոչերը ապարդիւն մնացին: Բայց փաստերը խօսու են եւ Ուաշինգթոն չի յարողոր: Թէեւ ՄԱԿի, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ ուրիշներու կոչերը դեռ պահանջի ձեւով չեն կատարուած:

Ներկայ տուեալներով, ոչ ոք կրնայ նախատեսութիւն կատարել ելքի մասին, եւ դաշնակից ուժերուն հակադրուող տարբեր եւ ուժերը կ'օգտուին այս անորոշութենէն:

Քորէյայի, Վիետնամի պատերազմները աւարտեցան, Իրաքի պատերազմն այս պիտի աւարտի: Ե՛րբ, ի՞նչպէս եւ ի՞նչ գին պիտի վճարուի, այդ հարցերը պատահաբան չունին տակաւին: Իսկ ձորճ Պուշ չի կրնար յաւեթաճանալ այս կացութեան մէջ, եթէ կ'ողգէ նախագահ վերնտրուի: Նախագահական ընտրապայքարի ընկալեցին ամերիկացի մէկ ինտուրթի մահը ճակատագրական կ'ըլլայ:

Ամերիկայի համար պատուաւոր ելքը ՄԱԿն է: Բայց արիւն հասկնալ, թէ ինչ բան է այդ Ամերիկան: Ժողովրդավարութեան եւ պարտի Միացեալ Ազգերու կազմակերպութեան յանձնել յարող հանգրուաններու իրականացումը, ինչ որ կը պահանջեն

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**
● Ճամբորդութեան պատճառով, Պուրճ Լամուս, Կարպոյեան շէնքեր, 160 քառ. մէթր, 9րդ յարկ: Դիմել՝ հեռ.՝ 03-748050:

ԿՈՒՉՈՒԻՆ
● AZADCO հաստ. կարիքը ունի վարպետ առողջապահներու: Դիմել՝ 01-682470:

**ԾԱԽՈՒ
ԼՈՂԱՇԵՐՏ**
● Այնճաք, գիւղիմ մէջ, 4000 քառ. մէթր տարածութեամբ, քրիտոյթ, կոյուղիով եւ թրիֆազէ ելեկտրակայաններով: Դիմել՝ հեռ.՝ 03-207772:

բազմաթիւ երկիրներ, որոնց շարքին՝ նոյն Ամերիկայի դաշնակիցները, ինչպէս՝ Ֆրանսան եւ Գերմանիան, որոնք պատերազմի նախօրեակին եւ մինչեւ այսօր իրենց որդեգրած դիրքով վստահութիւնը կը վայելեն: Յարգ ՄԱԿի եւ կարգ մը երկիրներու խաղաղեցման եւ վերակառուցման աշխատանքներէն հեռանալով՝ գտնուեց ՄԱԿի յանձնելու կոչերը ապարդիւն մնացին: Բայց փաստերը խօսու են եւ Ուաշինգթոն չի յարողոր: Թէեւ ՄԱԿի, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ ուրիշներու կոչերը դեռ պահանջի ձեւով չեն կատարուած:

Ներկայ տուեալներով, ոչ ոք կրնայ նախատեսութիւն կատարել ելքի մասին, եւ դաշնակից ուժերուն հակադրուող տարբեր եւ ուժերը կ'օգտուին այս անորոշութենէն:

Քորէյայի, Վիետնամի պատերազմները աւարտեցան, Իրաքի պատերազմն այս պիտի աւարտի: Ե՛րբ, ի՞նչպէս եւ ի՞նչ գին պիտի վճարուի, այդ հարցերը պատահաբան չունին տակաւին: Իսկ ձորճ Պուշ չի կրնար յաւեթաճանալ այս կացութեան մէջ, եթէ կ'ողգէ նախագահ վերնտրուի: Նախագահական ընտրապայքարի ընկալեցին ամերիկացի մէկ ինտուրթի մահը ճակատագրական կ'ըլլայ:

Ամերիկայի համար պատուաւոր ելքը ՄԱԿն է: Բայց արիւն հասկնալ, թէ ինչ բան է այդ Ամերիկան: Ժողովրդավարութեան եւ պարտի Միացեալ Ազգերու կազմակերպութեան յանձնել յարող հանգրուաններու իրականացումը, ինչ որ կը պահանջեն

Այս օրերուն պիտի գուժարուի Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան ժողովը Քանթոնի մէջ: Ներկայ պիտի ըլլան նաեւ համաշխարհային ասիական հակադրուողները: Իրաքի հարցը անշրջանցելի պիտի ըլլայ այդ ժողովին: Ելքը ՄԱԿն է, որ կրնայ իր կարգին հսկողութեան մատնուի:

Յ. ՊԱԼԵԱՆ
Սեպտեմբեր 2003

ՅՈՒՑԱՏԵՐ

«ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ»

Առաւօտուն աչքս բացի ու տակաւին անկողինիս մէջ՝ զգացի արեւուն ջերմութիւնը: Աստուած իմ, այս եղանակին յատուկ հրաշք մըն է այս: Առտուան ժամը վեցին արդէն արեւ կայ սենեակիս մէջ, արեւ կայ անկողինիս վրայ:

Յատկեցի անկողինէս, պատուհանէն նայեցայ դէպի դիմացի ափը ուրկէ արեւը բարձրացած է: Եւ միտքէս ըսի՝

- Շնորհակալ եմ:
Որո՞ւ: Որո՞ւ շնորհակալ եմ:
Անշուշտ նախ Աստուծոյ, կամ՝ բախտիս: Որովհետեւ բախտաւորութիւն է առաւօտուն արթննալ եւ զգալ արեւուն ջերմութիւնը: Այլ խօսքով՝ զգալ ապրելու ջերմութիւնը: Եւ ես ատոր համար շնորհակալ եմ: Շնորհակալ եմ ո՛չ միայն Աստուծոյ: Կամ բախտիս: Այլ նաեւ՝ կ'երեւի թէ, շատերու: Օրինակ՝ շինութեան այն վարպետին, որ այս շէնքը այնպէս մը կառուցեց է, որ առաւօտուն արեւը ուղղակի կը թափանցէ սենեակէս ներս: Շնորհակալ եմ այն մարդուն, որ ապակին հնարեց է, թափանցիկ ապակին, ուրկէ ներս անարգել կը մտնէ արեւուն ճառագայթն ու ջերմութիւնը: Շնորհակալ եմ այն մարդուն, որ հնարեց է սա զարթուցիչ ժամացոյցը, որ ամէն առտու ժամը վեցին կ'արթնցնէ զիս, որպէսզի վայելեմ այս եղանակին տաքուկ արեւը: Շնորհակալ եմ անտարակոյս անձնական բժիշկիս, որուն յանձնարարած դեղերը կը նպաստեն առողջութեանս ու տակաւին ինծի կու տան կարողութիւնը առտու կայնուի արթննալու, անկողինէս ցատկելու ու վայելելու կեանքին ու աշխատանքին գեղեցկութիւնը: Շնորհակալ եմ այն մարդուն, որ այս դեղերը հնարեց են շինեց է: Եթէ ան ըլլար, բժիշկս ի՞նչ պիտի յանձնարարէր ինծի:

Այսպէս: Յատկեցի անկողինէս, պատուհանէն նայեցայ դէպի դիմացի ափը, ուրկէ արեւը բարձրացած է: Եւ միտքէս ըսի՝

- Շնորհակալ եմ:
Որո՞ւ շնորհակալ եմ: Եւ ինչո՞ւ շնորհակալ եմ:
Աստուած իմ, կրնամ համարել, թէ որո՞ւ շնորհակալ եմ եւ ի՞նչ բանի համար շնորհակալ եմ: Եթէ առաւօտուն արթննալ, մասնաւորապէս թէ՛ զիջերը լաւ քնացայ, կամ նոյնիսկ եթէ՛ չկրցայ գիշերը զու քնանալ, բայց եթէ առաւօտուն արթնցայ, ու տեսայ որ ապրելու երջանկութիւնը կը խուճէր ուղղիչ ու երակներէս կամ սիրտէս ներս, այլ պարագային ես քանի՞ հազար հոգիի շնորհակալ ըլլալու էի: Քանի՞ հազար հոգիի: Այն բարիքներուն համար, գորս ուղղակի կամ անուղղակի կերպով գործեցին ինծի: Կամ գոնէ այն շարիքներուն համար, գորս կրնային գործել, բայց չգործեցին: Քանի՞ հազար հոգիի:


Շնորհանալիս սա է: Այդ քանի մը հազար հոգիէն հագու թէ մէկ կամ երկու հոգին գիտէ ու կը լսէ, որ ես շնորհակալ եմ իրենց: Միւսները չեն գիտեր: Միւսները բնաւ գաղափար չունին, թէ սա պահուսն ես որքան շնորհակալ եմ իրեն: Որովհետեւ անոնք կը կարծեն թէ ոչինչ ըրած են ինծի համար: Որովհետեւ անոնք բնաւ չեն գիտեր, թէ ես իրեն շնորհիւ է որ սա պահուսն կը վայելեմ արեւուն ջերմութիւնը եւ կը պատրաստուիմ շնչելու արեւով ու երջանկութեամբ տաքացած օդ մը: Եւ անոնք շատ պիտի զարմանան, եթէ ես սա պահուսն սա կամ նա ձեռով իրենց ըսեմ, թէ շնորհակալ եմ իրենց:

- Ինչո՞ւ, հարց պիտի տան անոնք, ես ի՞նչ ըրի որ քեզի համար:
Ես ո՞ր մէկը պիտի բացատրեմ: Ո՞ր մէկը պիտի կարենամ իրենց: Բաւերը պիտի բաւե՛ն: Կամ մարդիկը զիս խենթ պիտի չկարծեն: Պիտի չմտածեն, թէ ես կը գառնացեմ, թերեւս կը շարունակեմ երազել, թերեւս անիրական բաներու մասին կը խօսիմ: Թերեւս ալ շնորհակալութիւն յայտնելու հիւանդ մըն եմ, որ տեղի կամ անտեղի կերպով «Շնորհակալ եմ» կ'ըսէ բոլորին:

Բայց ես գիտեմ թէ չեմ գառնացեր: Դեռ առտուան ժամը վեցին է: Մէկ ժամ վերջ, երկու ժամ վերջ, եւ մինչեւ գիշեր քանիններու ու քանիններու շնորհակալ պիտի մնամ եւ անոնցմէ հագու թէ երկուքին, կամ երեքին կամ վեցին պիտի կարենամ ըսել, թէ որքան շնորհակալ եմ իրենց:

Եւ եթէ գիտեմ թէ ես շնորհակալ եմ քանի-քանիններու, գիտեմ թէ քանի-քանիններ ալ շնորհակալ են ինծի: Արդէն ամբողջ օրուան ընթացքին պարբերաբար գլուխս պիտի վերցնեմ աշխատանքիս վրայէն եւ դէպի պատուհան նայելով պիտի մտածեմ: Քանիններ շնորհակալ եմ իրենց: Քանիններու սրտին մէջ արեւ ծագեցուցի այսօր ալ, քանիններու տիրութեան խաւարին վրայ քիչ մը ուրախութեան լոյս սփռեցի, քանիններու ըսի, որ կը սիրեմ գանոնք, կը հասկնամ գանոնք, կը գնահատեմ գանոնք: Քանիններու ըսի որ ուրախ եմ որ անոնք գոյութիւն ունին աշխարհի վրայ: Անոնք երջանկացան իմ այս խօսքերով եւ շնորհակալութիւն յայտնեցին կամ չյայտնեցին, բայց շնորհակալ մնացին ինծի: Անոնք ալ ինչո՞ւ նման, առաւօտուն երբ իրենց աչքերը պիտի բանան եւ պիտի նային արեւուն, որ կը ծագի, կամ երբ փողոց պիտի ելլեն իրենց գործին երթուլու համար, կամ դպրոց ճամբելէ առաջ պիտի շոյեն իրենց գաւակին գլուխը, պիտի մտածեն թէ ինծի եւ ուրիշ շատերու շնորհակալ են:

Չեմ գառնացեր: Գիտեմ, որ հիմա եթէ պատուհանը բանամ ու ականջ տամ գիշերուան լուռութեան, պիտի զգամ որ օդը լեցուն է շնորհակալութեան խօսքերով, որոնք կ'երթան, կամ կու գան, կամ օդին մէջ իրարու կը բախին: Շնորհակալութեան խօսքեր, լսելի կամ անլսելի, արտասանուած կամ չարտասանուած: Չեմ լսեր, բայց գիտեմ: Օդը լեցուն է՝ անոնցմով:



**ԳՐԱՏՈՒՆ
ՈՍԿԵՂԱՐ**

- ★ Ունիմք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները:
- ★ Մանկական գունաւոր գիրքեր, Երգարան եւ Երագահան:
- ★ Չարգացումի միախառն համայնագիտարաններ՝ Անգլերէն եւ Ֆրանսերէն:

Պուրճ Լամուս, Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ կից,
Հեռ.: 01/264750
P.O.Box: 11-8877, Beirut, Lebanon
E-mail: vosketar@yahoo.com

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Է
ՓՕԼԻԿԼՈՒԹՔՈԼԵԾ**

Ձեր դիմաց կը բանայ այս մասնագիտութիւնը՝

Ա.՝ Եթէ հասած էք Թ. դասարան՝ արձանագրուէ Պաքալորիա Ա. դասարան,

Բ.՝ Եթէ տիրացած ես Պաքալորիայի, արձանագրուէ Գոլէճին համալսարանի(T.S.) Ա. տարուան:

Մեր շրջանաւարտները փնտռուած են եւ կը գործեն Լիբանանի յառաջադէմ վարժարաններու մէջ:

Արձանագրութիւն՝ ամէն օր:

ԾԱՆՕԹ.՝ Նիւթականի պատճառով ոչ մէկ հայ ուսուցիչ պիտի զրկուի իր մասնագիտացումի կարելիութենէն:

Հայ վարժարաններ, դո՛ւք եւս օգտուեցէք ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ մեր շրջանաւարտներէն:

ՓՕԼԻԿԼՈՒԹՔՈԼԵԾ.՝ Տորա՛ հեռ. 01/251320

«Մր. Մր. Ար.» - Նորարար Գողթնաբնակ Պիպերու Եւ Եւրոպայի Երկրներու Մասին

ՆՈՐԱԳՈՅՆ ԶՈՂԸ

ԼԵՆԻՆԱՐՏՕ ՏԱ ՎԻՆՉԻԻ «ԱՍՏՈՒԱՅԱՍԱՅՐԸ ԻՆԿԿՆ ԵՅՏ» ԳԵՂԱՆԿԱՐԸ ԱՆՅԵԱԼ ԶԱԲԱԹ ԳՈՂԹՆԱԲՆԱԿ ՍԿՈՎՏԻՍԿԱՆ ԴՐԵԱԿԵ ՍԸ: ԵՐԿՈՒ ԳՆԱՍԱՐԻ ԻՐԻԵՒ ԱՅՅԵԼՈՒ ՆԵՐԱ ՄՏԱՆ ԵՒ ԻՐԵՆՅ ԵՅՏ ԴՈՒՐԱ ԸՆԵՑԻՆ ԶԱՅՆ: ԱՅՅԵԱՆ ՊԱՐԶ.

«Աստուածամայրը իրիկին հետ» (Մատոնա ուխտ տի Եարնուայնտըր) գեղանկարը կը գնահատուի 25 միլիոնէն 50 միլիոն փառնուտի միջև եւ կը համարուի վերջին 70 տարիներուն Բրիտանիոյ մէջ գողցուած արուեստի ամէնէն յատկանշական գործերէն մէկը: Գեղեցիկ արուեստներու մասնագէտ մը կ'ըսէ. «Պէտք չէ թերագնահատել գեղանկարին արժէքը: Ոմանք դէպքը համապարհ կը նկատեն «Մոնալիզա»ի դիմանկարին գողցուածը: Բարեբախտաբար անիկա վերագործուած էր»:

իր դռները կը փակէ 7 Սեպտեմբերին, սակայն այս տարի գողութեան պատճառով փակուեցաւ մէկ շաբաթ կանուխ: Լէնինարտոյ գեղանկարին անհետանալէն ետք պատէն վար առնուեցաւ Ռամպարանթի գեղանկարը:

Ոստիկանութիւնը հրապարակած է գողերուն նկարագրականը: Անոնցմէ մէկը կը լը թուի, թիւնոր թեւակոխած է 40 տարեկանը, մաքուր ամիւրէն է, 175 սմ. հասակ ունի եւ նիհարակազմ է: Գողութեան օրը ան հագած էր սրճագոյն կոշիկներ, դեղնաւուն տաքատ, սեւ թիւ-շըրթ, սրճագոյն կաշիէ բաճկոն, դրած էր սեւ գօտի, պէյսպոլի սրճագոյն գլխարկ եւ կլոր ակնոցներ: Միւսը 50 տարեկանի սեմին է, գրեթէ նոյն հասակով, նոյնպէս՝ նիհար եւ մաքուր ամիւրէն: Ան հագած էր սեւ տաքատ, սեւ կոշիկներ, երկար թեւով դեղնաւուն շապիկ մը, անթեւ բաճկոն մը եւ դրած էր լայն եզրերով դեղնաւուն գլխարկ: Ոստիկանութեան համաձայն, գողերը նախապէս այցելած են դղեակը:

Տրամալանիկի դղեակը բնակավայրն է Պաքիստանի Ղուքսին, որ Սկոտլոնդի ամէնէն հարուստ անձերէն է: Անոր արուեստի հաւաքածոն կը գնահատուի 405 միլիոն փառնուտով: Ան մեծ եկամուտ կ'ապահովէ նաեւ իր ընդարձակ կալուածներէն: Դուքսին գաւազը՝ Ռիչըրտ Տալքայթ յայտարարած է, թէ իր ընտանիքը «ցնցուած է եւ յուսախարուած»:

«Այս գանձը մեր ընտանեկան յարկին տակ գողութիւն ունեցած է 250 տարիէ ի վեր: Անիկա աշխարհի ամէնէն գեղեցիկ արուեստի գործն է եւ կը պատկանի աշխարհի մեծագոյն գեղանկարիչներէն մէկուն, - կ'ըսէ Տալքայթ: - Նապոլեոն թիւն եւ գեղեցիկութիւն կը ճառագայթէ անկէ: Նորապէս տխուր կը զգանք, երբ կը մտածենք, թէ անիկա ձեռով մը պոկուած է մեզմէ: Տարիներու ընթացքին հազարաւոր մարդիկ եկած են տեսնելու գայն: Միայն մենք չէինք վայելելու գայն եւ չէինք պահած»:

Դուքսը համոզուած է, որ գեղանկարը օր մը պիտի գտնուի եւ պիտի վերադառնայ դղեակը: «Ձեռով մը վիրաւորուած ենք: Դղեակին պաշտօնեաները այցելուներ ընդունած են փայտով եւ ջերմութեամբ, եւ յանկարծ այս բիրտ արարքով կը վարձատրուին», կ'ըսէ ան:

Տա Վինչի «Աստուածամայրը իրիկին հետ» գեղանկարը գծած է 1500էն 1510ի միջև: Անիկա կը պատկերէ Աստուածամայրը մանուկ Յիսուսին հետ, խաչաձեւ իրիկ մը ձեռքին, որ կը խորհրդանշէ Յիսուսի խաչելութիւնը:

Վերածնունդի փամառակաշըրլանի վարպետին գեղանկարը իտալիոյ մէջ գտնուած է 18րդ դարուն, Պաքիստանի երրորդ դուքսին կողմէ:

Այժմ գեղանկարը ապահովագրած ընկերութիւնը շուրջ 100 հազար փառնուտի պարգեւ մը խոստացած է անոր, որ տեղեկութիւններ կու տայ գեղանկարին ապահով վերադարձին վերաբերեալ: Վերջնական գումարը պիտի ճշգրտուի ընկերութեան ստացած տեղեկութիւններուն կարեւորութեան համաձայն:

Բրիտանիոյ տարածքին օդակայաններու, նաեւ հանգիստներու եւ երկաթուղիի կայարաններու ապահովութեան պատասխանատուները ստացած են գողութեան լուրը եւ գողերուն պատկերները: Միջազգային ոստիկանութիւնը, ինչպէս նաեւ աշխարհի թանգարաններն ու աճուրդի վաճառատուները եւս տեղեակ պահուած են:



Գողերը կը փորձեն իրենց դէմք ծածկել խուսափելով դղեակին ապահովութեան հսկող Գլադախտուտի գործիքներէն:

«Ընդհանուր կարծիքը այն է, թէ Լէնարտոն ինք սկսած է գծել գեղանկարը եւ ինք ճշգրտած է անոր մէջ արտայայտուած գաղափարները, սակայն աւելի ուշ, հաւանաբար անոր մահէն ետք, անոր արուեստանոցին մէջ ծառայող օգնական մը ամբողջացուցած է գայն», կ'ըսէ ան:

ՆԵՒԿԱՎՐՈՒԹԻՒՆ ԿՄՍ ԱԳԱՎՈՒԹԻՒՆ

Էտիկայարայի թալպոթ Ռայս պատկերասրահին արուեստի գործերուն պատասխանատուներէն Տանքըն Մաքմիլըն կ'ըսէ, թէ «Աստուածամայրը իրիկին հետ» գեղանկարը անմիջապէս վաճառուելու հաւանականութիւնը գերօ է: «Գողերուն համար գրաւիչ է այն իրողութիւնը, թէ արուեստի գործերը շատ սուղ կ'արժեն, - կ'ըսէ ան: - Ձանոնք ներգրաւողը գեղանկարիչին մեծութիւնն է: Լէնարտոյն աւելի լաւը կարելի չէ գտնել: Ան բոլոր փամառակներու մեծագոյն եւ ամէնէն հռչակաւոր գեղանկարիչներէն է»:

Միւսէն Վինչիի համաձայն, ինդրոյ առարկայ գեղանկարը շուկայ չունի, որովհետեւ «շատ հռչակաւոր է»: «Անիկա Լէնարտոյի վերաբերող գրականութեան մաս կազմած է առաջին 200 տարիներուն: Ով որ Լէնարտոյի նկատմամբ որեւէ հետաքրքրութիւն ունեցած է, անպայման ծանօթ է այս գեղանկարին: Հետեւաբար, ան որ այս գեղանկարը ձեռքին մուտք գործէ Լոնտոնի Պոնտ փողոցին վրայ գտնուող աճուրդի Քրիսթի'զ կամ Սոթբի'զ վաճառատունը, անմիջապէս կը ձեռքաւորուի»:

Տը Մարքո կատարուած գողութիւնը կը նկարագրէ իրեւ թեւ թեւս արուեստի խնամքով:


«Ով որ տիրացած է այս գեղանկարին, դատարարութեան թալպոթը չի կարող լինել: Այս մարդիկը ինչպէս որ թանկէ կ'ապահովուին, ինչպէս որ տառապանքով անիկա գեղեցիկ գեղանկար մըն է, որ արժանի է ըլլալու այնպիսի մարդոց ձեռքին, որոնք կը հասկնան եւ կ'արժեւորեն գայն: Սակայն այժմ անիկա կը գտնուի վրանգ սպաննուցող մարդոց ձեռքին», կ'ըսէ Տը Մարքո:

ԳՈՂԵՐԸ ԺՎՊԱՒԵՆԻ ՎՐԱՅ

Լէնարտո տա Վինչիի գեղանկարին գողութիւնը հետապնդող ոստիկանները հրապարակած են երկու կասկածելիներու ելեկտրոնիկ նկարները, ինչպէս նաեւ սկոտլանդական դղեակին ապահովութեան հսկող նկարահանումի գործիքներէն առնուած անոնց պատկերները: Անոնք նաեւ գտած են ելեկտրոնիկ նկարը այն մարդուն, որ երկու շաբաթ առաջ գնած է գողերուն փախուստին ծառայած ինքնաշարժը:

Ոստիկանները այժմ քննութիւններ կը կատարեն Վոլքսվալըն «Կոլֆ ձի. Թի. Այ.» տիպի ճերմակ ինքնաշարժին վրայ, որ գողութեան օրը երեկոյեան լքուած էր Տրամալանիկի դղեակին շուրջ տարածուող ծառաստանին մէջ: Անոնք այժմ կը փնտռեն «Պի. Էմ. Տալքայթ» տիպի երկրորդ ինքնաշարժ մը, որ ծառայած է գողերուն փախուստին:

Դղեակին ապահովութեան ծառայող նկարահանումի գործիքներուն արձանագրած փակուածներուն մէջ ակնհայտ է, որ գողերը կը խուսափին իրենց դէմքերը պարզելէ եւ ճիգ կը թափեն ծածկելու իրենց դիմագիծը: Այլ պատկեր



Տրամալանիկի դղեակին մէջ կը ցուցադրուի արուեստի գործերու հարուստ հաւաքածոյ մը:

մը ցոյց կու տայ, թէ անոնք ինչպէս հապճեպով խոյս կու տան դղեակէն, ինքնաշարժին մէջ իրենց սպասող երկու մեղսակիցներու հետ: Անոնք դղեակին կին պաշտօնեաներէն մէկը գետին փռած են նախքան գեղանկարը շրջանակով միասին դղեակէն դուրս հանելը:

«Աստուածամայրը իրիկին հետ» գեղանկարը կախուած էր դղեակին աստիճաններուն վրայ, հանրութեան դիմաց բաց տարածքի մը մէջ: Դողեակը կը պարունակէ արուեստի բազմաթիւ արժէքաւոր գործեր եւ հնութիւններ, ներառեալ՝ Ռամպարանթի «Ընթերցող ծեր կինը» եւ Հոլպայնի «Սըր Նիքոլըս Քարիւի դիմանկարը», որոնք կը ցուցադրուին դղեակին գլխաւոր սենեակներուն եւ սրահներուն մէջ: Դղեակը այցելուներ կ'ընդունի ամառը: Անիկա սովորաբար

ՏԱՐԱՎԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՆ ԱՐԺԵՔԻՆ ԸՈՒՐՁ

Քննադատները տարբեր կարծիքներ ունին «Աստուածամայրը իրիկին հետ» գործին գեղարուեստական արժանիքներուն վերաբերեալ:

Էտիկայարայի մէջ արուեստի մասնագէտ Ռիքի տը Մարքո կ'ըսէ. «Կը սիրեմ այս գեղանկարը: Անիկա Սկոտլոնդ քաղաքակիրթ երկիր մը ըլլալուն ապացոյցներէն մէկն է: Սկոտլոնդ այս գեղանկարով իրաւունք կը զգայ ինքզինք ճշմարտապէս եւրոպական երկիր մը համարելու»:

«Փառաւոր գեղանկար մըն է, որ մաս կը կազմէ հրաշալի հաւաքածոյի մը եւ կը ցուցադրուի ամէնէն գեղեցիկ տան մէջ, որ կարելի է երեւակայել: Իտէպ վարժ» Լէնարտոյի մէկ գործը տեսնելու փորձառութեան համար, - կ'աւելցնէ ան: - Անիկա ինծի կը յիշեցնէ Աստուածամոր այն գեղանկարը, որ կը գտնուի Քրաքովի քաղաքային պատկերասրահին մէջ: Աստուածամայրը պատկերուած է այնպիսի լոյսի մէջ, որ գայն երկիր կ'իլեցնէ: Ան զբաղած է բոլոր մայրերուն բնորոշ աշխատանքով. այսինքն հոգ կը տանի իր զակիւն»:

Սակայն «Լանտըն Իմիինի Սթենտըրտ» թերթին արուեստի քննադատ Պայըն Սիւուէյի համաձայն, անիկա «ամէնէն բաղձալի» գեղանկարը չէ:

«Գեղանկարը արհեստագիտական առումով այնքան ալ կատարելա չէ: Հնութեան պատճառով մթադնած է եւ ճեղքուտուած: Աստուածամոր դէմքին մեծ մասը իրականութեան մէջ քիչ մը ալյանդակ գծուած է», կ'ըսէ ան:

Սիւուէյի համաձայն, գեղանկարը յատկանշական է, որովհետեւ մաս կը կազմէ Լէնարտոյի արուեստին պատմութեան, սակայն բազմաթիւ մասնագէտներ վիճելի կը նկատեն գայն:

ՄԵԾ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐ ԱՐՈՒԲԵՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՅԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՆԲԱՅՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐ

Անուշտ Լէնարտո տա Վինչիի «Աստուածամայրը իրիկին հետ» գեղանկարին գողութիւնը արուեստի գործերու առաջին կողպուտը չէ իր տեսակին մէջ: Արուեստի գողցուած գործերու հետքը փնտռող Արթ Լոս Ռեճիսթըր սպասարկութեան պատասխանատու Ճուլիըն Ռատըլիֆ կ'ըսէ, թէ նման գողութիւններ «հաւանաբար աւելի դժուար են օրուան մէջ, երբ պատկերասրահներ բաց են հանրութեան դիմաց, քան՝ գիշերին, երբ ահազանգերը կը միացուին: Երբ արուեստի գործեր կը ցուցադրուին քաղաքի մը կեդրոնէն հեռու վայրի մը մէջ, ապա դժուար է գանոնք պաշտպանել գողութեան դէմ»:

ԼՈՒՎՐ. ՓԱՐԻՉ, 1911

Արուեստի պատմութեան մէջ մեծագոյն գողութիւնը հետաքրքրութիւն ստեղծած է, երբ իտալացի բանուոր Վինչենցօ Փերուճիա գողցած է Լէնարտո տա Վինչիի «Մոնալիզա»ն: Արարքը ինքնին գայն վերածեց աշխարհի ամէնէն հաշակաւոր գեղանկարին: Փերուճիա գայտացած էր, որ իտալական բազմաթիւ արուեստի գործեր կը գտնուէին Լուվրի մէջ, հետեւաբար օր մէկ, երբ առանձին կը գտնուէր թանգարանին մէջ, «Մոնալիզա»ին դիմանկարը վար առած է պատէն, եւ գայն իր բաճկոնին տակ թաքցնելով դուրս ելած է:

Դիմանկարը երկու տարի կորուած մնաց: Սակայն հազարաւոր ֆրանսացիներ թանգարանին առջեւ հերթի սպասեցին, պատին վրայ անոր դատարկ տեղը տեսնելու համար: «Մոնալիզա»ին հռչակը արդէն ապահովուած էր:

ԱՁԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ. ԼՈՆՏՈՆ, 1961

Կոյալի «Ուելինկլիքնի դուքսին դիմանկարը» լուրերու մէջ յիշատակուեցաւ, երբ Բրիտանիոյ պետութիւնը մեծ դրամահաւաքի մը ձեռնարկեց, որպէսզի գեղանկարը չվաճառուի օտար գնորդի մը:

Պաքիստանի հռչակը պատճառ դարձաւ, որ դիմանկարը դառնայ թիրախը Գեմիթըն Պանթըն անուսով անգործ վարորդի մը, որ խոստովանած է, թէ Ազգային պատկերասրահ մտած է բաց պատուհանէ մը եւ անկէ դուրս ելած է՝ գեղանկարը թեւին տակ:

Պանթընը ըսած է, թէ կը փափաքէր դիմանկարին փոխարէն փրկագին ստանալ եւ այդ գումարով պատկերասրահի ընտանիքները գնել չբաւարարուի համար: Ան 3 ամիս բանտարկութեան դատապարտուած է: Սակայն 1996ին Ազգային պատկերասրահին կողմէ հրապարակուած փաստաթուղթեր ապացուցեցին, թէ Պանթընը հաւանաբար անմեղ էր:

ՌԱՍՊՈՐՕ ՀԱՌՈՒՄ. ԻՐԼԱՆՏԱ, 1975-2002

Հաւանաբար արուեստի պատմութեան մէջ ամէնէն մեծ գողութիւնը տեղի ունեցած է Ռասպորձո Հաուսի մէջ, չորս հանգրուանով, եւ 45 գեղանկար գողցուած է 1975էն 2002ի միջև:

Անցեալ տարի Ռասպորձո Հաուսէն անհետացած երկու գեղանկարներ նախապէս գողցուած էին 1986ին եւ վերադարձուած էին 7 տարի ետք: 2002ի գողութիւնը տեղի ունեցաւ, երբ նախկին գողութիւնէ մը վերայայտնուած երկու այլ գեղանկարներ նոր վերադարձած էին թանգարան:

ՊՈՍԹԸՆ. ՄԵՍՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, 1990

Ամերիկայի պատմութեան մէջ արուեստի գործերու մեծագոյն գողութիւնը պատահեցաւ, երբ 300 միլիոն տոլար արժողութեամբ գեղանկարներ անհետացան Պոսթընի Իզապելա Սթիւարթի կարտունը թանգարանէն: Անոնց շարքին էին Վերմիլիէն, Ռամպարանթէն եւ Մանէէն գործերը:

Գեղանկարները անհետացած են, երբ առաւօտեան կանուխ փամբուրու ոստիկանի տարազով երկու տղամարդիկ մուտք գործած են թանգարան՝ ըսելով, թէ վերի յարկերուն վրայ արտասովոր շարժումներ նկատած են: Անոնք անմիջապէս ձեռնակապեր անցուցած են թանգարանին ապահովութեան հսկող պահակներուն ձեռքին եւ ձեռնակապերը կապած են բազրիկներու:

Տակաւին 5 միլիոն տոլարի պարգեւ մը կը սպասէ անոր, որ գտնէ գողոնը:

ՎԱՆ ԿՈՎԻ ԹԱՆԳԱՐԱՆ. ԱՄՍԹԵՐՏԱՄ, 1991

Դիմանկարը եւ զինուած երկու տղամարդիկ վան կովի թանգարանին գողցան 20 գեղանկարներ: Անոնցմէ իւրաքանչիւրը այդ օրերուն կ'արժէր 10 միլիոն տոլար:

Ոստիկանութեան համաձայն, գողերէն առնուազն մէկը Շարթթ գիշեր թանգարանին մէջ փամբուրու գետին փռած է երկու պահակներ, ստիպել է ետք, որ անջատեն ահազանգերը: Սակայն գողերուն խոյս տալէն հազիւ մէկ փամ ետք գեղանկարները գտնուած են անոնց

փախուստի ինքնաշարժին մէջ, եւ ոչ ոք գիտցած է, թէ ինչո՞ւ:

«ՃԻՉԸ». ՕՍԼՈ, 1994

Մինչ Նորվեգիոյ բնակչութեան մեծ մասը կը դիտէր Ողբալիական ձմեռային խաղերուն բացուած Լիւհամբըրի մէջ, երկու գողեր մուտք գործեցին մօտակա Օսլոյի մէջ պատկերասրահը եւ իրենց հետ տարին էտուրտ Մունքի ամէնէն հռչակաւոր գործը՝ «Ճիչը» (Տը սքրիմ):

Մինչ գողերը տակաւին կը գտնուէին պատկերասրահին մէջ, ահազանգը հնչած էին, սակայն պահակները անտեսած էին գանոնք: Գողերը իրենց ետին ձգած էին երկտող մը, որ կ'ըսէր «Շնորհակալութիւն» թոյլ հսկողութեան համար»:

Երկարատեւ հետաքննութիւններէ ետք, ի վերջոյ կարելի եղաւ յայտնաբերել գողցուած գլուխ գործոցը, երբ անոր շրջանակին մէկ մասը գտնուեցաւ պասիլըսու կայարանի մը մէջ:

ՄՈՒՔՉՈՒՄ. ՇՈՒԷՏ, 2000

Ամէնէն յանուզն գողութիւններէն մէկը կատարելով՝ դիմակաւոր եւ գինուած երեք գողեր մուտք գործեցին Սթոքհոլմի Ազգային թանգարանը, մինչ այցելուներ կը թափառէին անոր մէջ: Անոնք Ռամպարանթէն գործ մը եւ Ռոնուարէն երկու գեղանկար անելով դուրս վազեցին:

Գողերը նաեւ կով խոյս տուին պատկերասրահին կից տարածուող ջուրերուն վրայ: Չորս ամիս ետք ոստիկանութիւնը թմրեցուցիչի առնչուած խուզարկութեան մը ընթացքին գտաւ գեղանկարներէն մէկը:



Չեռրակալուեցաւ 8 զոգի, որոնցմէ իւրաքանչիւրը 6.5 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

<p>Պատրաստեց Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ</p>
--

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻՐԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԿԸ ՍԿՍԻ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերասիոնը յստակացուց յառաջիկայ Երեքշաբթի, 9 Սեպտեմբերին սկսելիք ֆեդերասիոնի բաժակի մրցաշարքին (նախկին «Վալսուրոյ» բաժակը) մրցումներուն ժամերն ու վայրերը: Բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 7:30ին, Պէյրուսի Քաղաքապետարանի դաշտին վրայ:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Նըժմէ, Թատամոն Սուր, Անսար (Ա. խմբակ), Օլիմպիք, Սաֆա եւ Ահտ (Բ. խմբակ):

- Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը.
- ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Նըժմէ - Անսար
- ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Ահտ - Սաֆա
- ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Թատամոն Սուր - Նըժմէ
- ՌԻՐԱԾ, 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Օլիմպիք - Ահտ
- ՇԱԲԱԾ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Թատամոն Սուր - Անսար
- ԿԻՐԱԿԻ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Օլիմպիք - Սաֆա
- ԵՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Ա. խմբակին առաջինը - Բ. խմբակին երկրորդը
- ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Բ. խմբակին առաջինը - Ա. խմբակին երկրորդը
- ՇԱԲԱԾ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ**
- Աւարտական

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՓՈՐԹԻՒՑ ԲՈՐՈՒՆԱ՝ ԱՌԱՋԻՆ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 2րդ հանգրուանի մրցումներուն, Տեփորթիւս Քորուսա յաղթեց եւ ապահովեց առաւելագոյն վեց կէտերը, առանց կոլ ստանալու:

Աթլետիքո Գիլյաոյի դէմ տեղի ունեցած մրցումին, Լա Քորուսայի երկու ապաստասկան կոլերը նշանակեցին իսուան Քարլոս Վալերոն (11րդ) եւ Ռուրըր Փանտիանի (57րդ): Այսպիսով Գիլյաո, Ալպասթէի եւ Ռէալ Սարակոսայի նման իր կատարած երկու մրցումներուն ալ պարտութիւն կրեց: Անոնք երեքն ալ (ինչպէս նաեւ Մալակա), ցարդ չեն յաջողած կոլ նշանակել իրենց մրցակիցներուն բերդէն ներս:

Եղանակի բացման մրցումին, յաղթանակներ արձանագրած Ռէալ Մատրիտ եւ Պարսելոնա, 2րդ հանգրուանին կորսնցուցին եղանակի իրենց առաջին երկու կէտերը, երբ 1-1 արդիւնքով հաւասարութիւն արձանագրեցին, յաջորդաբար՝ Վիարէալի եւ Սելիլլայի հետ: Ըլլալ Ռէալ Մատրիտ եւ ըլլալ Պարսելոնա իրենց հաւասարութեան կոլը նշանակեցին, իրենց մրցակիցներուն նշանակած կոլերէն ետք միայն:

- Ստորեւ՝ 2րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.
- Մուրսիա - Ռասինկ Սանթանտեր 1-1
 - Ռէալ Վալատոլիտ - Մալակա 1-0
 - Աթլետիքո Մատրիտ - Ալպասթէ 1-0
 - Մայորքա - Ռէալ Սարակոսա 2-0
 - Ռէալ Պելլիս - Էսփանիոլ 2-2
 - Տեփորթիւս Քորուսա - Աթլետիքո Գիլյաո 2-0
 - Վիարէալ - Ռէալ Մատրիտ 1-1
 - Օսասունա - Վալենսիա 1-1
 - Ռէալ Սոսիէտատ - Սելթա Վիկո 1-1
 - Պարսելոնա - Սելիլլա 1-1

- Ստորեւ՝ 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.
- Ալպասթէ - Պարսելոնա
 - Աթլետիքո Գիլյաո - Մայորքա
 - Սելթա Վիկո - Ռէալ Պելլիս
 - Էսփանիոլ - Վիարէալ
 - Ռասինկ Սանթանտեր - Ռէալ Սոսիէտատ
 - Սելիլլա - Տեփորթիւս Քորուսա
 - Վալենսիա - Մալակա
 - Ռէալ Սարակոսա - Մուրսիա
 - Օսասունա - Աթլետիքո Մատրիտ
 - Ռէալ Մատրիտ - Ռէալ Վալատոլիտ

Հ.Ս.Ը.Ս. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ Գ. ՆԻՍՏ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 5 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» մարզաճակատային համալիրին մէջ:

Անդամներուն ներկայութիւնը խիստ պարտաւորիչ է:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԹԵՆԻՍ. ԵՌԻ. ԷՍ. ՕՓԵՆ

ԱԿԱՍԻ ԵՒ ՌՈՏԻԷ ՇԱՍԱՆ ԲԱՌՈՐԴ ԱԲԱՐՏԱԿԱՆ

Երբ Էս. Օփընի տղոց Գ. հանգրուանի մրցումները, երէկ եւ անցնող քանի մը օրերուն անձրեւի զանգուրդ միջոց ալ յետաձգուեցան:

Միայն երկու մրցումներ ամբողջացան, որոնց ընթացքին ամերիկացիներ Էնտի Ռոտիք (դասուած՝ 4րդ) եւ Անտրէ Ակասի (առաջին) յաջողեցան ապահովել քառորդ աւարտականի մրցումներուն իրենց տոմսերը:

Ռոտիք 6-3, 6-4 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց պելճիքացի Զաիէ Մալիսը:


Ակասիի եւ անոր ազգակիցին՝ Թէլլըր Տէնթի (73րդ) միջեւ տեղի ունեցած մրցումը



Ռոտիք

մը վերջ գտաւ ի նպաստ առաջինին, նկատի ունենալով որ Տէնթի ռոտի մկանային հարցեր ունենալով չկրցաւ մրցումը շարունակել, մինչ արդիւնքը կ'ընթանար ի նպաստ Ակասիի՝ 6-7, 6-4 եւ 7-5:

Երէկ անձրեւը խանգարեց արժանութիւնաւոր Գաիթ Նալպանտեանի եւ Կոնցերիսի մրցումը:



Ակասի

Ռոտի Տէտերի (դասուած՝ 2րդ) միջեւ մրցումը, երբ առաջին սէթին Ֆետերեր 3-2 արդիւնքով կը յառաջանար:


ՊԵՔԶԱՄ ՎԻՐԱԽՈՐՈՒԵՑԱԻ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 2րդ հանգրուանի մրցումները, կարգ մը խուճերու հարուածներ հասցուցին, որովհետեւ անոնց մաս կազմող մարտիկները թեթեւ վնասուածքներ ստացան:

Ռէալ Մատրիտի մաս կազմող Անգիլիոյ ֆուտբոլի ազգային խումբին խմբապետ Տէլլիտ Պեքամ, որ Վիարէալի դէմ տեղի ունեցած մրցումին (1-1) վիրաւորուեցաւ, շատ հաւանաբար բացակայի վաղը՝ Շաբաթ Սքոփիէի մէջ տեղի ունենալիք Մակեդոնիա - Անգիլիա մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):

Նոյն ալը մրցումին վիրաւորուեցաւ նաեւ Ռէալ Մատրիտի յետապահ՝ Իվան Հելկուերա, որ վաղը Շաբաթ Փորթուգալի դէմ տեղի ունենալիք ֆուտբոլի բարեկամական մրցումէն բացի, պիտի բացակայի նաեւ Սպանիոյ կատարելիք յառաջիկայ Զորեքշաբթի, 10 Սեպտեմբերին Յունաստանի դէմ կատարելիք մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):

Վերոնշեալ երկու մրցումներէն բացի, ան պիտի բացակայի նաեւ յառաջիկայ Սեպտեմբեր 13ին տեղի ունենալիք Ռէալ Մատրիտ - Անգիլիա մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):



Հելկուերա

Ստորեւ՝ 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՐՄՍԹՐՈՆԿ Կ'ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Հինգ անգամ Ֆրանսայի հեծելարշաւի տիտղոսին («Թուր Տը Ֆրանս») տիրացած ամերիկացի հեծելանորդ Լէնս Արմսթրոնկ եւ անոր կինը՝ Քրիսթին երէկ որոշեցին վերջ մը դնել իրենց ամուսնական կեանքին եւ ամուսնալուծուիլ:

31 տարեկան Լէնսի եւ 32 տարեկան Քրիսթինի բաժանումը տեղի ունեցաւ «Թուր Տը Ֆրանս»-էն անմիջապէս ետք, թէեւ անոնք նախապէս ալ առիթով մը, անցեալ Յունւարին իրարմէ բաժանուած, ապա վերամիտնեցան էին:

Արմսթրոնկ ամուլը, որ ունի երեք պառակ, կը բնակի Թեքսաս (Մ. Ն.), սակայն այժմ իւրաքանչիւրը կը մնայ տարբեր տան մէջ:



Հելկուերա

Մատրիտ - Անգիլիա մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):

Նոյն ալը մրցումին վիրաւորուեցաւ նաեւ Ռէալ Մատրիտի յետապահ՝ Իվան Հելկուերա, որ վաղը Շաբաթ Փորթուգալի դէմ տեղի ունենալիք ֆուտբոլի բարեկամական մրցումէն բացի, պիտի բացակայի նաեւ Սպանիոյ կատարելիք յառաջիկայ Զորեքշաբթի, 10 Սեպտեմբերին Յունաստանի դէմ կատարելիք մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):

Վերոնշեալ երկու մրցումներէն բացի, ան պիտի բացակայի նաեւ յառաջիկայ Սեպտեմբեր 13ին տեղի ունենալիք Ռէալ Մատրիտ - Անգիլիա մրցումէն (Եւրո-2004ի պտույտ):

ԿՈՒԱՐՏԻՈՂԱ ՄԵԿՆԵՑԱԻ ԲԱԹԱՐ

ՍՊԱՆԻՈՅ ֆուտբոլի ազգային խումբին միջազգային նախկին յետապահ եւ Պարսելոնայի նախկին խմբապետ Ենսի Կուարտիոյ անցեալ շաբաթ միացաւ քաթարեան Ահի խումբին:

32 տարեկան Կուարտիոյ, որ 47 անգամ կրած է Սպանիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը, մինչ անոր պարտաւորութիւնը 11 տարի մաս կազմած է Պարսայի, իր նոր ակումբէն իրաքանչիւր տարի պիտի գանձէ 2 միլիոն ամերիկեան տոլար: Բացի այդ մէկէն, ան իր տրամադրութեան տակ պիտի ունենայ տուն մը, ինքնաշարժ մը եւ... վարորդ մը:

ՍՊԱՆԻՈՅ մաս կազմող քունկոցի յառաջապահ Շապանի Նոնտա, որ ենթակրկնուեցաւ ծունկի վերաբուծութեան, այս եղանակին անգամ մը եւս պիտի չկարենայ դաշտ ներկայանալ, որովհետեւ անոր ապաքինումը պիտի տեւէ ութ ամիս:

26 տարեկան Նոնտա վիրաւորուեցաւ անցեալ շաբաթ «Փարք Տէ Փրէնս»ի մէջ տեղի ունեցած մրցումին:

ՓԻՆԿ ՓՈՆԿ Հ. Մ. Ը. Մ. ՏԻՐԱՅԱԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱԿԻ ՄԸ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի անհատական ախոյեանութեան մրցումներուն, երէկ Հ. Մ. Ը. Մ. տիրացաւ իր երկրորդ բաժակին, երբ տղոց 1986-1987 ծնունդ դասակարգին մէջ, Մալէք Թաուիլ (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս) աւարտականին, որ եղաւ զուտ Հ. Մ. Ը. Մ. ակաւան 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր եղբայրը՝ Ժալալը:

Նախապէս Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս շահած էր ալ բաժակ մը, երբ 1992-1993 դասակարգին մէջ Աւո Մունջողլեան աւարտականին 3-0 արդիւնքով պարտութեան մատնած էր Հրակ Պետոյեանը (Թրիփոլի):

Աղջկանց 1988-1989 դասակարգին մէջ Գուին Մունջողլեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս) 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Թալա Հաուիլայէն, մրցաշարքը աւարտեց երրորդ դիրքին վրայ: Աւարտականին, Ռուպա Պրեսլայէն 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Թալան, հանդիսացաւ ախոյեան:

Տղոց 1988-1989 դասակարգին մէջ, Մալք Փուլտեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Հայտար Նաբրէն դուրս մնաց:

Նոյն դասակարգին մէջ, Հրակ Մանուէլեան (Անթիլիաս) յաջորդաբար պարտութեան մատնելէ ետք Ահմէտ Մաժիտը (3-0) եւ Շատի Նուրէտիսը (3-0), երրորդին պարտուեցաւ Ուաէլ ժըրտիէն (3-0):

Տղոց 1990-1991 դասակարգին մէջ Արամ Մանուէլեան (Անթիլիաս) 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նաուալ Մրիաննան, ճակատեցաւ Միշէլ Մաթթայի դէմ եւ 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց անկէ:

Սահակ Փալեան (Թրիփոլի) 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց ճոնի Սայեաթէն:

Նոյն դասակարգին մէջ Հայկ Սաչերեան (Թրիփոլի) յաջորդաբար պարտութեան մատնեց Ալի Ըպէյիսին (3-0) եւ Ալեքսի Թըրպիսին (3-0), ապա պարտուեցաւ Մոհամէտ Ռիֆահիէն (3-0) եւ բնականաբար դուրս մնաց մրցաշարքէն:

Այսօր՝ Ուրբաթ տեղի կ'ունենայ տղոց եւ աղջկանց մրցումներուն վիճակագրութիւնը:

ՔԱՅԶԸՐՍԼԱՌԻԹԸՐՆԻ ՄԱՐԶԻԸ ԱՐԴԷՆ ԻՍԿ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԻ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ...

Քայլերը յատարարուեցան երէկ խումբին մարզիչին՝ Էրիք Կերթոցի երկու մրցում պայմանաժամ տուին, փրկելու համար իր պաշտօնը, այլապէս ան կրնայ դառնալ Պունտապիլայի 2003-2004 եղանակի առաջին պիտի:



Էրիք Կերթոց

Արդէն իսկ ախոյեանութեան մրցումները նուազ երեք կէտով սկսած Քայլերսլաւաբերն (պատժուած Գերմանիոյ ֆուտբոլի ֆեդերասիոնին կողմէ) այժմ 0 կէտով կը գրաւէ ընդհանուր դասաւորման վերջին դիրքը երեք պարտութեամբ եւ մէկ յաղթանակով:

Երեք պարտութիւններէն բացի, անիկա կրեց չորրորդ մըն ալ, երբ Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն, 4-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Գ. դասակարգին մաս կազմող Այնթրաբ Պրաունշուէկէն եւ բնականաբար դուրս մնաց մրցաշարքէն:

Քայլերսլաւաբերնի տնօրէն Ռընէ Ժակի յայտնեց, որ յառաջիկայ երկու մրցումներուն, եթէ խումբը յաղթանակ մը եւ հաւասարութիւն մը չկարենայ արձանագրել, 49 տարեկան պելճիքացի Կերթոց պիտի կորսնցնէ իր պաշտօնը:

Տղոց հանգրուանի մրցումներուն, Քայլերսլաւաբերն իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Ֆրայպուրկը, մինչ 6րդ հանգրուանին՝ հիւրը պիտի ըլլայ Այնթրաբ Ֆրանսֆորթը: Առաւելագոյն վեց կէտերէն չորս կէտը ապահովելը Կերթոցի համար պիտի ըլլայ ճակատագրական, որովհետեւ ճախողութեան մը պարագային, ան պիտի դադարի խումբին մարզիչը ըլլալէ, հակառակ անոր որ ան անցեալ եղանակին իր կազմը փրկեց Բ. դասակարգ փոխադրուելէ:

ԱԶԳ. Ե. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃԻ

«Բ. ՓԱՓԱԶԵԱՆ» ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

Վարդուհի Մարկոսեանի մահուան առիթով, Ազգ. Ե. Մանուկեան ընկեր 2. դասարանի աշակերտները 25,000 Լ. ո.

